ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2016թ. թիվ 392-Ա

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊՈՒՇԿԻՆՈՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 4, 9, 15 և 17 կետերը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Պուշկինոյի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի խորհրդի նախագահի 09.11.2016թ. գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. մարտի 15-ի «Լոռու մարզի դպրոցների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» թիվ 75-Ա որոշմամբ հաստատված «ՀՀ Լոռու մարզի Պուշկինոյի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի խորհրդի կազմում վերահաստատել մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Կարինե Արզոյանի թեկնածությունը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. նոյեմբերի 10
ք.Վանաձոր